

ՏԻԿԱԼՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ 58ՐԴ ՊԱՏՉԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տիկնանց Միութեան 58րդ Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ թեմիս Առաջնորդարանին մէջ՝ Դինգշաբթի, Ապրիլ 29ին, 2010, առաւօտեան ժամը 9:45ին, Նախագահութեամբ Թեմակալ Առաջնորդ, Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտրեանի: Ժողովի Ատենապետուհին էր Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի Ատենապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեան: Իսկ Ատենադպրուհիի պարտականութիւնը կատարեց Կեդրոնական Խորհուրդի Ատենադպրուհի՝ Անի Լանուզա:

Առաջնորդ Սրբազան Զօր կատարած Բացման Աղօթքէն ետք, Ն.Ա.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին յատկապէս այս ժողովին համար առաքած պատգամը կարդաց Արժ. Տ. Յովէլ Քհնյ. Օհանեան, իսկ Անգլերէն թարգմանութիւնը կարդաց Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան: Նորին Սրբութիւնը իր պատգամին մէջ կ'ըսէր.-

«Գոհութիւն եւ փառք ենք մատուցանում առ Աստուած, որ Տէրը մեր ազգին շնորհում է ձեզ պէս նուիրեալ դուստրեր, ովքեր իրենց առաւելագոյնն ի գործ են դնում հայոց ազգային-եկեղեցական կեանքը բարեգարդելու եւ հայութեան բարօրութեանն իրենց նպաստը բերելու համար: Համախմբուած Տիկնանց Միութեան կազմում, դուք անգնահատելի օգտակարութիւն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան իրականացմանը Միացեալ Նահանգների Արեւմտեան ափերում, ի սպաս բերելով Ձեր ժամանակը, նիւթական ու հոգեւոր կարողութիւնները: Մասնաւոր գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ դուք երկար տարիներ հետեւողական ջանքերով աջակցում էք հայրենաբնակ ծնողազուրկ երեխաներին, թեթեւցնելով նրանց սոցիալական դժուարութիւնները: Ձեր կեանքով ու գործերով դուք լուսաւոր նոր էջեր էք յաւելում մեր Եկեղեցու պատմութեան մէջ եւ հաւատաւոր ընթացքով Ամենախնամ Տիրոջ օրհնութիւնը վաստակում ձեր, ձեր ընտանիքիների եւ համայն մեր ժողովրդի համար:

Սիրելի դուստրեր հայոց, մաղթում ենք Ձեզ անսպառ խանդավառութիւն ու նոր ներշնչանքներ՝ հայրենապստ եւ եկեղեցասէր ոգու մէջ առաւել զօրանալու եւ աստուածահաճոյ նոր նախաձեռնութիւններով ձեր առաքելութիւնը զարդարելու համար՝ ի շինութիւն եւ պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայոց Արեւմտեան Թեմի: «Եւ զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք: Գոհացողք լինիջիք զԱստուծոյ եւ զՅօրէ նովաւ» (Կող. Գ. 17):

Առաջնորդ Սրբազան Հայրը տուաւ ի հոգեւոր պատգամը, որուն մէջ ըսաւ. «Սիրելի Տիկնանք, համագումարի միջոցաւ բոլորդ ալ կոչումը ստացած էք վերանորոգելու ձեր ծառայութեան ուխտը: Որպէս հետեւորդները Քրիստոսի եւ դէկավարները ձեր համայնքներուն, կարիքը ունիք հոգեպէս աճելու Աստուծոյ շնորհքով, սորվելու Աստուծոյ Խօսքը եւ իր սպասաւորները դառնաք համայնքներուն մէջ: Սենք գիտենք, եւ դուք բոլորդ ալ քաջ գիտէք, այն աշխատանքը եւ զոհողութիւնները որ դուք կ'ընէք Եկեղեցւոյ համար, նպատակ ունի փոքրիկներուն մէջ թրծելու հաւատքի կեանքը, սակայն ասոնցմէ գերիվեր, առ հասարակ համայնքի բոլոր անդամները: Հաստատուած Եկեղեցին եւ բոլոր կազմակերպութիւնները, որոնք կը գործեն Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, կարիքը ունին առատապէս ունենալու Աստուածային սէրը: Ժամանակն է, որ ինքնաքննութիւն կատարենք հարց տալով մեր հիմնական գոյութեան եւ որոնենք ճիշտ պատասխաններ: Որքան մենք այս հարցումներուն պատասխանները գտնենք եւ գործադրենք զանոնք, նոյնքան եւս Եկեղեցին որպէս նուիրական հաստատութիւն՝ կ'աճի ու կը զօրանայ: Որքան որ մեր կեանքերը յանձնենք Աստուծոյ ձեռքերուն մէջ, այնքան աւելի կը յաջողինք մեր շատ մը առաքելութիւններուն մէջ: Համագումարները գեղեցիկ առիթներ պէտք է ըլլան հոգեպէս վերափոխուելու՝ ազնիւ նպատակ հետապնդելով մարդոց հոգիներն ու միտքերը վերափոխելու եւ դարձնելու դէպի Արարիչն Աստուած»:

Հիւրընկալ՝ Պըրպէնքի Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպազեան բարի գալուստ մաղթեց Տիկնանքներուն, ապա տուաւ օրուան Հոգեւոր Պատգամը, որուն մէջ ըսաւ. «Մինչ բոլորս կը հաւաքուինք այս նուիրական յարկին ներքեւ, կարեւոր է, որ մեզմէ իւրաքանչիւրը ինքնաքննութիւն կատարելով հարց տայ, թէ որքա՞ն կըրցած է յառաջանալ դէպի Երկինքի Արքայութեան՝ մարդկային այս ընկերութեան մէջ: Յիշեցէք, որ Մարիամ Մագդաղենացի եւ Աստուածամայր Մարիամ առաջին հետեւորդներ էին Քրիստոսի, որոնք լսեցին Քրիստոսի Յարութեան Մեծ Աւետիսը:

Անոնք զօրաւոր հաւատք ունէին Յիսուսի այն խօսքին, թէ «Ինք պիտի մեռնէր եւ երրորդ օրը յայտնուէր պիտի առնէր»: Հաւասարապէս բոլորս ալ կանչուած ենք պայծառամալու ուրիշ օրհայտներու մէջ՝ շնորհիւ մեր անչափելի հաւատքին»:

Ատենապետուհի Տիկին Արաքսի Պոյամեան ինք եւս բարի գալուստ մաղթեց բոլորին, ապա ներկայացուց Կեդրոնական Խորհուրդի կազմը, ինչպէս նաեւ ժողովավարական Կանոններու Յանձնախումբի անդամները: Վաւերացուեցաւ նախորդ տարուան Ապրիլ 30ին գումարուած Տիկնանց Միութեան 57րդ Պատգամաւորական ժողովին Ատենագրութիւնը, որ ներկայացուեցաւ Ատենադպրուհի Տիկին Անի Լանուզայի կողմէ:

Տարուան ընթացքին Տիկնանց Միութեան գլխաւոր ձեռնարկներն էին Ուխտագնացութիւններ Թեմիս Եկեղեցիներուն, Սրբուհիներու Օր՝ նուիրուած Սուրբ Հռիփսիմէ Կոյսին եւ Տարեկան Առանձնացում:

Գանձապահ Պէթի ճորճորեան ներկայացուց նիւթական տեղեկագիրը, որ գնահատութեամբ ընդունուեցաւ: Իսկ Պէթի Ֆարսաքեան ներկայացուց Հաշուեքննիչ Յանձնախումբին դրական տեղեկագիրը: Վաւերացուեցաւ նաեւ 2009-2010 թուի պիւտճէն: Ապա իւրաքանչիւր մասնաճիւղի Ատենապետուհին իր պատկան Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը ներկայացուց պատգամաւորներուն: Ուրախ ենք յայտնելու, թէ Թեմիս Հոգեւոր Հովիւներն ու նորակազմ փոքր Ծուխերն ալ իրենց պատգամաւորներով մասնակցեցան այս համագումարին:

Յաջորդաբար ներկայացուեցան հետեւեալ զեկոյցները: Ամառային ճամբար, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան՝ Արժ. Տ. Աւետիս Քինյ. Աբովեանի կողմէ, Փասատիմայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Ալֆրէտ եւ Մարկիթ Յովսէփեան Վարժարան՝ Տնօրէն Շահէ Մանկրեանի, Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմին՝ Տիկին Սինտի Նորեան, Էջմիածնի Փոքրիկներուն Հիմնադրամ՝ Տիկին Գայիանէ Թաթուլեանի կողմէ, Բարի Սամարացիներ, Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ՝ Տիկին Տէպի Տերտրեանի եւ Վահէ Սարգսեանի կողմէ, Մայր Տաճարի Փոքրիկ Կնքահայրեր՝ Տիկին Ալիս Չազըրեանի կողմէ: Ժողովի ընթացքին նկատի առնուեցաւ, որ Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդը Առաջնորդանիստ Մայր Տաճարի «Կնքահայր»երէն մին ըլլայ: Տեղի ունեցաւ մոմավառութիւն՝ ի յիշատակ վախճանեալ Տիկնանց Միութեան անդամներու:

Տիկնանց Միութեան 58րդ Պատգամաւորական ժողովի Տեղեկագիրներու Գրքոյկին մէջ Սրբազան Հայրը իր գրած պատգամին մէջ կ'ըսէր. *՝Այս տարի բոլորս ալ օրհնուած եւ բախտաւոր կը զգանք եւ Փառք կու տանք Ամենակալին Աստուծոյ, որ Առաջնորդանիստ Մայր Տաճարին կառուցումը իր աւարտին պիտի հասնի եւ Օգոստոս 14ի երեկոյեան պիտի կատարենք Նաւակատիքի Արարողութիւնը, իսկ Սեպտեմբեր 11ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամնայն Հայոց Կաթողիկոսը մասնակցութեամբ Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հայրերու, Թեմիս հոգեւորականներու, ի ներկայութեան հիւր հոգեւորականներու եւ պետական պաշտօնեաներու, Օծումը պիտի կատարէ Մայր Տաճարին՝ հոգեկան անհուն հրճուանք պատճառելով բոլորիս: Այս առիթով մեր բարձր գնահատութիւնը կը յայտնենք Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդին՝ Ատենապետութեամբ Տիկին Արաքսի Պոյամեանին, Խորհուրդի կազմին եւ Տիկնանց Միութեան բոլոր մասնաճիւղերու անդամներուն: Թող Աստուած օրհնէ ձեզ եւ յիշէ ձեր կատարած անձնուէր ծառայութիւնները՝ իր փառքին եւ առ ի պայծառութիւն Արեւմտեան Թեմի եւ անոր բոլոր Եկեղեցիներուն: Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք Տիկնանց Միութեան 58րդ Պատգամաւորական ժողովին եւ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Հիւրընկալ Յանձնախումբին:*

Մեր խօսքը կը փակենք Սուրբ Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքով, որ միշտ կը հնչէ մեր հոգիներուն խորը «Արդ՝ կը մնան հաւատք, յոյս, սէր. այս երեքը. բայց ասոնցմէ՛ մեծը սէրն է» (Ա. Կորնթ. 13:13): Թող Աստուծոյ սէրը բնակի ձեր մէջ, նոր եռանդ եւ ոյժ պարգեւէ ձեզի»:

Բ. ՆԻՍ

Երկրորդ Նիստի սկիզբը ներկայացուեցաւ Առաջնորդանիստ Մայր տաճարի Կնքահայր դառնալու առաջարկը: Ապա տեղի ունեցան ընտրութիւններ:

«Կանաւոր Աշխատանքի Գոհացումը» նիւթին շուրջ բանախօսեց Դոկտ. Զարմինէ Նազգաշեան: Ժողովը շարունակուեցաւ եւ կատարուեցան հետեւեալ նիւթերու ներկայացումները: Շնորհակալութեան եւ Գնահատութեան Յանձնախումբի Տեղեկագիրը կարդաց Տիկին Լիլի Պալեան: Փակման խօսքը կատարեց Ատենապետուհի Տիկին Արաքսի Պոյամեան, որ Տիկնանց Միութեան

Կեդրոնական Խորհուրդի անունով իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Զօր՝ իր հոգածութեան եւ տուած ցուցմունքներուն համար: Կեդրոնական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիկին Լենա Սիմոնեան տեղեկութիւններ տուաւ Մայր Տաճարի շինութեան աւարտին որպէս «Յաղթանակի Պարահանդէս» ծրագրուած ձեռնարկի մասին: Իսկ Սրբազան Զայրը իր փակման խօսքին մէջ գնահատեց Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի եւ բոլոր մասնաճիւղերու Տիկիններուն օգտակար ծառայութիւնները եւ մասնակցութիւնը կազմակերպուած ձեռնարկներուն: Յատկապէս գնահատեց Զոգեւոր Զովիւներուն ցուցաբերած աջակցութիւնը եւ առաջնորդութիւնը իրենց տեղական Ծուխերէն ներս եւ ի սրտէ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Կեդրոնական Խորհուրդի ներկայ կազմը հետեւեալն է.-

Արաքսի Պոյամեան՝ Ատենապետ, Պըրպէնքի Զայց. Եկեղեցւոյ Ծուխէն:
Լենա Սիմոնեան՝ Փոխ Ատենապետ, Լա Գանիատա-Քրէսէնթա Զովիտի Զայց. Եկեղեցիէն:
Անի Լանուզա՝ Ատենադպրուհի, Սան Տիէկոյի Ս. Յովիաննու Կարապետ Զայց. Եկեղեցիէն:
Այտա Սէթեան՝ Թղթակցութեանց Քարտուղարուհի, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Զայց. Եկեղեցիէն:
Պէքի ճորճորեան՝ Գանձապահ, Սագրամենթոյի Սուրբ Յակոբ Զայց. Եկեղեցիէն:
Մելինէ Աղաճանեան՝ Խորհրդական, Լա Գանիատա-Քրէսէնթա Զովիտի Զայց. Եկեղեցիէն:
Արփի Պարսամ՝ Խորհրդական, Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Զայց. Եկեղեցիէն:
Ալիս Իսկէնտէրեան՝ Խորհրդական, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Զայց. Եկեղեցիէն:

Հաշուեքննիչ Յանձնախումբ.-

Պէքի ճորճորեան՝ Սագրամենթոյի Սուրբ Յակոբ Զայց. Եկեղեցիէն:
Այտա Էսքիճեան՝ Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Զայց. Եկեղեցիէն:
Փէքի Սամարճ՝ Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Զայց. Եկեղեցիէն:

Ընտրողական Յանձնախումբ.-

Սուզի Գրիգորեանց՝ Արիզոնայի Սուրբ Աբգար Զայց. Եկեղեցիէն:
Մէրի ճուն Գայզըր՝ Սան Տիէկոյի Յովիաննու Կարապետ Զայց. Եկեղեցիէն:
Գլոտէ Միսալեան՝ Գոսթա Մեսայի Սուրբ Աստուածածին Զայց. Եկեղեցիէն:

Առաջնորդ Սրբազան Զայրը նորընտիր Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի կազմին պաշտօնավարութեան հաստատման արարողութիւնը կատարեց եւ օրհնեց զիրենք: Փակման օրհնութեան աղօթքով վերջ գտաւ Տիկնանց Միութեան 58րդ Պատգամաւորական ժողովը: Ապա Սրբազան Զօր գլխաւորութեամբ եւ Զոգեւորականներու մասնակցութեամբ, Տիկինները շրջագայեցան Մայր Տաճարի Համալիրէն ներս եւ ստացան անհրաժեշտ բացատրութիւններն ու տեղեկութիւնները, որուն յաջորդեց ընթրիքը՝ ջերմ մթնոլորտի մէջ:

„Æð²Ü ²è²æÜàð ,²ð²ÜÆ

Պըրպէնք, Ապրիլ 29, 2101